ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

18 հուլիսի 2008 թվականի N° 33-Ա

ք. Երևան

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահի, տեղակալի, անդամների, Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալի և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների (այսուհետ՝ Հանձնաժողովի պաշտոնատար անձինք) մոտ քաղաքացիների ընդունելության կազմակերպման գործընթացը կանոնակարգելու նպատակով,

հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի առաջին մասի «բ» և «է» կետերը՝

հրամայում եմ

1. Հաստատել Հանձնաժողովի պաշտոնատար անձանց մոտ քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը (այսուհետ՝ ընդունելության կարգ)՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարին և մամուլի քարտուղարին՝

5-օրյա ժամկետում ապահովել ընդունելության կարգի մասին հանրության իրազեկումը, այդ թվում՝ Հանձնաժողովի ինտերնետային կայքի միջոցով, ինչպես նաև ընդունելության կարգի պատճենի և ընդունելության օրերի և ժամերի մասին տեղեկատվության տեղադրումը քաղաքացիների համար մատչելի տեղում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. Շահնազարյան

Հավելված
ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողովի նախագահի
2008 թվականի հուլիսի 18-ի թիվ 33-Ա հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՄՈՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահի, տեղակալի, անդամների, Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալի և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների (այսուհետ՝ Հանձնաժողովի պաշտոնատար անձինք) մոտ քաղաքացիների ընդունելության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի նպատակն է ապահովել Հանձնաժողովի պաշտոնատար անձանց մոտ քաղաքացիների ընդունելության կազմակերպման ընթացակարգի մատչելիությունը:

3. Քաղաքացիների մուտքը Հանձնաժողովի շենք իրականացվում է անցագրային ռեժիմին համապատասխան:

4. Հանձնաժողովի պաշտոնատար անձանց մոտ ընդունելությունը, որպես կանոն, իրականացվում է քաղաքացու բանավոր դիմումի հիման վրա:

5. Քաղաքացու գրավոր դիմումի հիման վրա ընդունելությունը կազմակերպվում է սույն կարգին համապատասխան՝ քաղաքացու կողմից դիմումում նշված ժամկետում, իսկ ժամկետ նշված չլինելու դեպքում՝ ողջամիտ ժամկետում:

6. Հանձնաժողովի անդամների և աշխատակազմի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է նշված պաշտոնատար անձանց օգնականների միջոցով: Հանձնաժողովի նախագահի մոտ ընդունելություն կարող է կազմակերպվել նաև վերջինիս խորհրդականի միջոցով՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

7. Հանձնաժողովի պաշտոնատար անձանց մոտ ընդունելությունն իրականացվում է հետևյալ ժամանակացույցով.

1) Հանձնաժողովի նախագահի մոտ՝ յուրաքանչյուր երկուշաբթի, ժամը 11:00-ից մինչև 13:00-ն.

2) Հանձնաժողովի նախագահի տեղակալի մոտ՝ յուրաքանչյուր ուրբաթ, ժամը 15:00-ից մինչև 18:00-ն.

3) Հանձնաժողովի անդամների մոտ՝ յուրաքանչյուր հինգշաբթի, ժամը 15:00-ից մինչև 18:00-ն.

4) Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալի, վարչությունների և առանձնացված բաժների պետերի մոտ՝ յուրաքանչյուր հինգշաբթի, ժամը 11:00-ից մինչև 13:00-ն:

8. Առանձին դեպքերում, Հանձնաժողովի նախագահի կամ Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ, Հանձնաժողովի համապատասխան պաշտոնատար անձանց մոտ քաղաքացիների ընդունելություն կարող է իրականացվել նաև սույն կարգի 7-րդ կետում չնշված ժամկետներում, բացառությամբ ոչ աշխատանքային օրերի և ժամերի: